

## Հայբիզնեսբանկի Visa Platinum և Visa Infinite քարտապանների համար այսուհետև կգործի անվճար այցելություններ օդանավակայանների LoungeKey սպասասրահներ

Visa միջազգային վճարային համակարգը պրեմիում դասի քարտապաններին հնարավորություն է ընձեռում անվճար օգտվել միջազգային օդանավակայանների ավելի քան 1100 Lounge Key սպասասրահներից ամբողջ աշխարհում:
Բացահայտեք LoungeKey սպասասրահների առավելությունները՝

- մշտական ջերմ ընդունելիություն՝ անկախ ավիաընկերությունից և սպասարկման դասից,
- անվճար հյուրասիրություն և հարմարավետ կահավորված սպասասրահներ:

LoungeKey բիզնես սրահները հասանելի են աշխարհի գրեթե ցանկացած օդանավակայանում
Նշված հնարավորությունը հասանելի է Հայբիզնեսբանկի հետևյալ քարտատեսակների համար՝

- Visa Platinum - 2 անվճար այցելություն օրացույցային տարում,
- Visa Infinite - 6 անվճար այցելություն օրացույցային տարում:

**Նոր հնարավորությունը հասանելի է և գործող քարտերի համար և նոր տրամադրվող քարտերի համար:**

Անվճար այցելություններից օգտվելու համար անհրաժեշտ է ընդամենը Lounge Key սպասասրահներներում համապատասխան աշխատակցին ներկայացնել Visa Platinum կամ Visa Infinite գործող Հայբիզնեսբանկի քարտերից որևէ մեկը, նստեցման կտրոնը և անձը հաստատող փաստաթուղթ (ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն նույն անձի փաստաթղթերը):

Անվճար այցելությունները սպառելու դեպքում՝ յուրաքանչյուր այցելության համար անհրաժեշտ է վճարել 27 ԱՄՆ դոլլար:

Lounge Key սպասասրահներից օգտվելու հնարավորություն է ընձեռվում նաև քարտապանների հյուրերին, սակայն միայն քարտապանների ուղեկցությամբ և վճարելով 27 ԱՄՆ դոլլար յուրաքանչյուր հյուրի համար: Ուղեկցող հյուրերի քանակը սահմանվում է յուրաքանչյուր Lounge Key սպասասրահի պայմաններով՝ միջինում 4-6 անձ:

2-ից 4 տարեկան երեխաները այցելում են անվճար սպասասրահների մեծ մասում: Lounge Key սպասասրահներում գտնվելու ժամանակահատվածը սահմանվում է յուրաքանչյուր սպասասրահի պայմաններով, սակայն միջինում կազմում է 3-4 ժամ:

Ծառայություններից առավել հարմարավետ օգտվելու համարª ստեղծվել է LoungeKey հավելված, որը կարելի է ներբեռնել App Store և Google Play հարթակներում:

Ներբեռնելով բջջային հավելվածըª քարտապանը ստանում է ամբողջական տեղեկատվություն օդանավակայաններում Lounge Key սպասասրահների գտնվելու վայրերի մասին և կարող է ստուգել հասանելի անվճար այցելությունների քանակը:

Մանրամասների համար այցելել cis.visa.com: